

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 66-րդ հոդվածի առաջին մասում՝

1) առաջին նախադասությունում «5-ից» բառերը փոխարինել «20-ից» բառերով,

2) երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ընդ որում, հարկային գործակալը պարտավոր է տարին մեկ՝ հաջորդ տարվա փետրվարի 20-ից ոչ ուշ, սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչության մարմնին՝ անցած տարում ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (ամսական կտրվածքով)»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո հաշվետու ժամանակաշրջանների համար:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
Ա	Բ	Գ
ՀՀ կառավարություն	Ներկայացված փոփոխությունները չի կարելի համարել ՀՀ կառավարության 21.01.2010 թիվ 97 որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 1.1.1 և 1.1.2 կետերի իրականացում, քանի որ տվյալ փոփոխություններն ազդում են տնտեսվարողների փոքր հատվածի գործունեության վրա, էականորեն չեն նվազեցնում և չեն միասնականացնում տնտեսվարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունները: Ներկայացված փաթեթը չի պարունակում բարձրացված խնդրի ամբողջական լուծում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ի կատարումն ՀՀ վարչապետի նախագահությամբ սույն թվականի մարտի 10-ին կայացած գործարարների աջակցման խորհրդի նիստում տրված հանձնարարականի, տնտեսվարողների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվական փաստաթղթերի նվազեցման և միասնականացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ ստեղծվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ (2010 թ. մարտի 23-ի թիվ 01/16.31/1203-10 գրություն): Նախատեսվում է, որ բարձրացված խնդրի համապարփակ կարգավորման նպատակով մինչև սույն թվականի հուլիս ամիսը աշխատանքային խումբը կուսումնասիրի և կմշակի հաշվետվությունների նվազեցման և միասնականացման իրավական ակտերի ամբողջական փաթեթ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված իրավական ակտերի նախագծերի փաթեթի ընդունումը համարում եմ ոչ նպատակահարմար:	Ներկայացված դիտողության հետ համաձայն չենք, քանի որ մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթով՝ - Կրճատվում է ներկայացվող հաշվետվությունների քանակը հարկային մարմինների կողմից վարչարարվող հարկատեսակների և պարտադիր վճարների մեծամասնության գծով, այդ թվում՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, ոչ ռեզիդենտների շահութահարկի, հաստատագրված վճարների, բնապահպանական և բնօգտագործման վճարների, ճանապարհային վճար, հանրային ծառայությունների կարգավորման և այլ պարտադիր վճարների: - Նախնական գնահատմամբ՝ միայն արտոնագրային վճարների մասին նոր օրենսդրական փաթեթի հետևանքով մոտ 15 ԱԶ-ների համար արտոնագրային վճարներով հարկման ռեժիմին անցնելու եղանակով կտրուկ դյուրացվում է նրանց հաշվետվական ռեժիմը: - Օրենսդրական փաթեթով հիմքեր են ապահովվում հարկային հաշվետվությունների հետագա ավտոմատացման համար,

		միասնականացվում են բոլոր հարկային հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետները: • ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ստեղծվող աշխատանքային խմբի առջև դրված խնդիրը կապված է ՀՀ կառավարության 21.01.2010 թիվ 97 որոշման հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 1.1.4 կետի իրականացման հետ և վերաբերվում է ընդհանրապես պետական մարմիններին ներկայացվող փաստաթղթերի նվազեցմանը: Իսկ սույն օրենսդրական փաթեթը մշակված է ի կատարումն վերոնշյալ որոշման 1.1.1 և 1.1.2 կետերի, որոնք վերաբերվում են միայն հարկային հաշվետվությունների օպտիմալացման խնդրին:
ՀՀ կառավարություն	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «պարբերությունում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով:	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում անհրաժեշտ է հրապարակել «բառերը» բառով, իսկ հրապարակել «բառերը» բառով, իսկ հրապարակել «բառերը» բառով:	Ընդունվել է: Նախագիծը վերախմբագրվել է: